ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 178-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 124-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ (ՄԻՆՉԵՎ 09.10.2020 Թ. ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ)՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Հրաչյա Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի և 124-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչև 09.10.2020 թ. կատարված փոփոխությունը)՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2023 թվականի հուլիսի 13-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Հրաչյա Հովհաննիսյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով վերջինս խնդրել է.

«1. Պարզել, թե՞ արդյոք սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կիրառված ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասը, նույն օրենքի 124-րդ հոդվածի 2-րդ մասը (մինչև 09.10.2020 թվ. փոփոխությունը) համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի հետ այն դեպքում, երբ իրավահարաբերության ծագման պահին գործող «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ աշխ-օր-ի 175-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով և 4-րդ մասով (*) օրենսդիրը սահմանել է աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու պայմաններում աշխատավարձ ստանալու հնարավորություն:

2. ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նշված իրավական նորմերի կիրառման և ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածով սահմանված լիազորությունները չկատարելու հետևանքով չի խախտվել արդյո՞ք ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը սահմանված կարգով մասնակցած ՀՀ քաղաքացու աշխատավարձ ստանալու իրավունքը թե՞ ոչ»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ/5737/02/20, ինչպես նաև թիվ ԵԿԴ/1939/02/16 քաղաքացիական գործերի դատավարական նախապատմությունները՝ Դիմողը նշում է, որ Վճռաբեկ դատարանը, ելնելով իրավունքի զարգացման իր առաքելությունից և նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմնի տվյալ իրավական ակտն ընդունելու նպատակից, պետք է մեկնաբաներ, թե արդյո՞ք դատարանը սույն գործով իրավահարաբերությունը կարգավորելու համար պետք է ղեկավարվեր Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ ՀՀ սահմանները պաշտպանելու պարտականությունը կատարած ՀՀ քաղաքացու սոցիալական շահերը պաշտպանելու նպատակով օրենսդրի ընդունած իրավական նորմերով, ինչպիսիք են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետը և 4-րդ մասը, թե՞ պետք է բիզնեսի շահերից ելնելով՝ ղեկավարվեր ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով, այն սխալ մեկնաբանելով՝ մերժեր աշխատավարձի վճարումն աշխատողին, քանի որ վերջինս պատերազմական իրավիճակում, սահմանված կարգով, ՀՀ զինված ուժերի կազմում մասնակցել է ՀՀ սահմանների և Արցախի պաշտպանությանը, որի հետևանքով բացակայել է աշխատանքից և չի կատարել իր աշխատանքային պարտականությունները:

Դիմողը գտնում է, որ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/5737/02/20 քաղաքացիական գործով միանգամայն անհիմն է մեկնաբանել 2020 թվականի հոկտեմբերի 9-ին փոփոխված՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածը, քանի որ վճռաբեկ բողոքում այդ հոդվածին հղում չի կատարվել: Հավելելով՝ Դիմողը նշում է, որ Վճռաբեկ դատարանն անհիմն է հիշատակել նաև իր կողմից

հարկադիր պարապուրդի դիմաց ստացած հատուցումը, քանի որ թիվ ԵԿԴ/1939/02/16 քաղաքացիական գործով դատարանը որոշել է ոչ միայն աշխատանքից անօրինական ազատված աշխատողին տրամադրել հատուցում հարկադիր պարապուրդի դիմաց, այլ նաև աշխատողին չի վերականգնել աշխատանքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով և դադարեցրել է կողմերի միջև աշխատանքային պայմանագիրը: Ըստ Դիմողի՝ նշվածը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն, նշանակում է, որ աշխատողին պետք է վճարվի աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու օրվա դրությամբ չվճարված աշխատավարձը՝ որպես վերջնահաշվարկի գումար: Մինչդեռ, Դիմողի պնդմամբ՝ Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանություններից ակնհայտ է դառնում, որ աշխատանքից անօրինական ազատված և դատարանի կողմից աշխատանքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով չվերականգնված աշխատողին միայն հարկադիր պարապուրդի գումարը վճարելով՝ գործատուն ազատվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված վերջնահաշվարկ կատարելու պարտականությունից, որն ակնհայտորեն սխալ է:

Դիմողը նաև նշում է, որ Վճռաբեկ դատարանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի (մինչև 09.10.2020 թ. կատարված փոփոխությունը) սխալ մեկնաբանությամբ կիրառման և այդ հիմքով վճռաբեկ բողոքը մերժելու հետևանքով խախտել է իր՝ Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված՝ յուրաքանչյուր աշխատողի՝ աշխատանքից անհիմն ազատման դեպքում պաշտպանության իրավունքը:

Ըստ Դիմողի՝ Վճռաբեկ դատարանը չի պաշտպանել իր՝ աշխատանքից անհիմն ազատման օրվա դրությամբ հասանելիք աշխատավարձը ստանալու իրավունքը, հետևաբար՝ այդ որոշմամբ կիրառված ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասը, նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասը (մինչև 09.10.2020 թ. կատարված փոփոխությունը) հակասում են Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ

աշխատանքային օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի և 4-րդ մասի պահանջների պայմաններում:

Դիմողն ընդգծում է, որ Վճռաբեկ դատարանի եզրահանգումը հակասում է Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասին, քանի որ ըստ Վճռաբեկ դատարանի՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցող աշխատողը, որը կատարում է իր սահմանադրական պարտականությունը, չի կարող ստանալ աշխատավարձ, քանի որ վերջինս չի կատարում աշխատանքային պայմանագրով սահմանված իր պարտականությունները:

Արդյունքում՝ Դիմողը եզրակացնում է, որ Վճռաբեկ դատարանը սույն գործով կիրառման ենթակա իրավական ակտերի նորմերը չի մեկնաբանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝ ելնելով օրենսդրի նպատակներից:

Ըստ Դիմողի՝ Վճռաբեկ դատարանի 2023 թվականի հունվարի 16-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանությանը մասնակցած աշխատողին հասանելիք աշխատավարձի վճարումը մերժելը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի սխալ մեկնաբանման հետևանքով, հակասում է Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին մասին:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողն իր դիմումի խնդրամասում վիճարկել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի և 124-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչև 09.10.2020 թ. կատարված փոփոխությունը) սահմանադրականությունը, մինչդեռ իր դիմումի հիմնավորումների որոշ հատվածներում անդրադարձել է նաև տվյալ դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությանը, ուստի՝ Դիմողի կողմից բարձրաց-

ված հարցը կդիտարկվի վիճարկվող՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի և 124-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչև 09.10.2020 թ. կատարված փոփոխությունը), այդ թվում՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության սահմանադրականությունը:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, ***եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ *«(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:*

Սահմանդրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր:

Նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման իրավաչափության հարցի քննարկման պարագայում Սահմանադրական դատարանը կստանձնի դատական ակտ վերանայող դատական ատյանի գործառույթ, որը ոչ միայն չի բխի Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորումներից, այլև փաստացի կվերացնի Սահմանադրական դատարանի և եռաստիճան դատական համակարգում գործող դատարանների գործառույթների տարանջատումը:

Այսինքն՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել բացառապես նորմատիվ ակտի, ինչպես նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատումը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողի կողմից բարձրացված հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ Դիմողը, ձևականորեն վիճարկելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի և մինչև 2020 թվականի հոկտեմբերի 9-ին կատարված փոփոխությունը գործող 124-րդ հոդվածի 2-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) կիրառման իրավաչափության հարց:

Այսպես՝ Դիմողը ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ «ՀՀ վճռաբեկ դատարանը, ելնելով իրավունքի զարգացման իր առաքելությունից և նորմատիվ իրավական ակտը ընդունող մարմնի տվյալ իրավական ակտը ընդունելու նպատակից պետք է մեկնաբաներ, թե արդյո՞ք դատարանը սույն գործով իրավահարաբերությունը կարգավորելու համար պետք է ղեկավարվեր ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ՀՀ սահմանները պաշտպանելու պարտականությունը կատարած ՀՀ քաղաքացու սոցիալական շահերը պաշտպանելու նպատակով օրենսդրի ընդունած իրավական նորմերով, ինչպիսիք են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը և ՀՀ աշխ. օր-ի

175-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետը և 4-րդ մասը, թե՞ պետք է բիզնեսի շահերից ելնելով ղեկավարվեր ՀՀ աշխ. օր-ի 178-րդ հոդվածի 1-ին մասով, այն սխալ մեկնաբանելով մերժեր աշխատավարձի վճարումը աշխատողին, քանի որ վերջինս պատերազմական իրավիճակում, սահմանված կարգով, ՀՀ զինված ուժերի կազմում մասնակցել է ՀՀ սահմանների և Արցախի պաշտպանությանը, որի հետևանքով բացակայել է աշխատանքից և չի կատարել իր աշխատանքային պարտականությունները»:

Դիմողը նաև նշել է. «(…) ՀՀ վճռաբեկ դատարանը միանգամայն անհիմն է սույն գործով մեկնաբանել 09.10.2020 թվ. փոփոխված ՀՀ աշխ. օր-ի 124-րդ հոդվածը, քանի որ վճռաբեկ բողոքում այդ հոդվածին հղում չի կատարվել: Անհիմն է հիշատակել նաև Հ. Հովհաննիսյանի կողմից հարկադիր պարապուրդի դիմաց ստացած հատուցումը, քանի որ ԵԿԴ/1939/02/16 քաղաքացիական գործով դատարանը որոշել է ոչ միայն անօրինական աշխատանքից ազատված աշխատողին տրամադրել հատուցում հարկադիր պարապուրդի դիմաց, այլ նաև դատարանը աշխատողին չի վերականգնել աշխատանքում ՀՀ աշխ. օր-ի 265-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով և դադարեցրել է կողմերի միջև աշխատանքային պայմանագիրը, ինչը նշանակում է, որ աշխատողին պետք է վճարվի աշխատանքային պայմանագիրը դադարեցման օրվա դրությամբ չվճարված աշխատավարձը, որպես վերջնահաշվարկի գումար, համաձայն ՀՀ աշխ. օր-ի 130 հոդվածի: Սակայն ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշված մեկնաբանություններից ակնհայտ է դառնում, որ անօրինական աշխատանքից ազատված և դատարանի կողմից աշխատանքում ՀՀ աշխ. օր-ի 265-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով չվերականգնված աշխատողին միայն հարկադիր պարապուրդի գումարը վճարելով գործատուն ազատվում է ՀՀ աշխ. օր-ի 130 հոդվածով սահմանված վերջնահաշվարկ կատարելու պարտականությունից, ինչն ակնհայտորեն սխալ է»:

Դիմողն իր անհատական դիմումում ներկայացրել է նաև հետևյալ դիրքորոշումը. «Օրենսդիրը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակից աշխատող անձանց (որոնք ընդգրկված են զինվորական ծառայության

մեջ և կամավորական մարտական ջոկատներում) աշխատավարձի վճարման հարցը կարգավորել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխ. օր-ի 124-րդ հոդվածի 2-րդ մասով, 175-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով և 4-րդ մասով (ՀՕ-109-Ն փոփոխությունը կատարվել է 2016թվ. հուլիսի 2-ին, որը տարածվում է 2016թվ. ապրիլի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա) և «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, որոնք ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից պետք է մեկնաբանվեին իրավահարաբերության ծագման պահին գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ օրենսդիր նպատակներից ելնելով, քանի որ, օրենսդիրը Հայաստանի Հանրապետության պաշտպանության պարտականությունը ՀՀ քաղաքացիների համար ամրագրել է ՀՀ Սահմանադրությամբ: Հետևաբար՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 16.01.2023թվ. որոշումը Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանությանը մասնակցած աշխատողին հասանելիք աշխատավարձի վճարումը ՀՀ աշխ. օր-ի 178-րդ հոդվածի 1-ին մասի սխալ մեկնաբանման հիմքով մերժելը հակասում է ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին մասին»:

Ելնելով վերոշարադրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողը վիճարկվող՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի և մինչև 2020 թվականի հոկտեմբերի 9-ին կատարված փոփոխությունը գործող 124-րդ հոդվածի 2-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացրել, իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են դատարանների (մասնավորապես՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի և Վճռաբեկ դատարանի) գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ և՛ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, և՛ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/5737/02/20 քաղաքացիական գործով կայացրել են Դիմողի համար անբարենպաստ իրավական հետևանքներ առաջացնող դատական ակտեր:

Այսպես՝ թիվ ԵԴ/5737/02/20 քաղաքացիական գործի շրջանակներում վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2022 թվականի մարտի 29-ի որոշմամբ մասնակի բավարարել է «Մելլաթ բանկ» ՓԲ ընկերության անունից Վարդան Հարությունյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/5737/02/20 քաղաքացիական գործով 05.10.2021 թ. կայացրած վճիռը մասնակի՝ սկզբնական հայցի մասով բեկանել և փոփոխել է՝ մերժելով սկզբնական հայցը: Թիվ ԵԴ/5737/02/20 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.10.2021 թ. վճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ: Վճռաբեկ դատարանն իր՝ 2023 թվականի հունվարի 16-ի որոշմամբ մերժել է Դիմողի կողմից բերված վճռաբեկ բողոքը՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.03.2022 թ. որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Ողջ վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողի կողմից բարձրացված հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ վերաքննիչ քաղաքացիական դատարանի և Վճռաբեկ դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, որը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Նման պայմաններում սույն անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Հրաչյա Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի և 124-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչև 09.10.2020 թ. կատարված փոփոխությունը)՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՀ **Ա.ԴԻԼԱՆՅԱՆ**

1 օգոստոսի 2023 թվականի
ՍԴԱՈ-88